ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Ա. Ղազումյան

«31» օգոստոսի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռու մարզի Վանաձորի

Մարզ համայնք

Վ. Համբարձումյանի անվան N 25 հիմն.դպրոց, III բ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Ջահանգիրյան Անահիտ Վարդանի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

IIIբ դասարանում սովորում են 32 աշակերտ՝ 15 աղջիկ, 17 տղա։ Բոլորն էլ ապահոված են դասագրքերով։ Ունեն բավարար ընդունակություններ։ Դասարանի աշակերտները պարտաճանաչ հաճախում են դպրոց, կատարում են ուսուցիչների հանձնարարությունները և պահանջները։ Դասարանում չկա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, ինչպես նաև՝ դժվար դաստիարակվող աշակերտ։ Բոլորն էլ մասնակցում են ֆիզկուլտուրայի դասերին։

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետևել աշակերտների կարգապահությանը

Խիստ ուշադրություն դարձնել նրանց բացակայություններին

Ձևավորել փոխօգնության մթնոլորտ

Հայեցի արժեհամակարգի ձևավորում

Ուսման մեջ դժվարություններ ունեցող աշակերտների հետ անցկացնել անհատական աշխատանքներ, խթանել նրանց ուսումնական ակտիվությունը

Բացատրել աշակերտներին, թե ինչպես պետք է իրենց պահեն տանը, դպրոցում, փողոցում և այլ հասարակական միջավայրում

Նպաստել աշակերտի անձնային որակների ձևավորմանն ու վարքագծի կարգավորմանը, խթանել սովորողի ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը

Ծանոթացնել իրենց իրավունքներին և պարտականություններին

Խթանել սովորողների հետաքրքրությունը ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը

Անընդհատ հետևել դասագրքերի վիճակին, դասարանի հերթապահությանը

Ծանոթացնել ճանապարհային երթևեկության կանոններին

Ապահովել փոխադարձ կապ սովորողի ծնողի հետ

Բարոյահոգեբանական առողջ մթնոլորի ամրապնդում

Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1Հոգևոր դաստիարակություն

Աշակերտներին տալ հոգևոր ճիշտ դաստիարակություն՝ հեռու պահելով աղանդներից։ Հայ ականավոր գործիչների կերպարների օգնությամբ երեխաների մեջ խորացնել հայ քրիստոնյա քաղաքացու ձևավորումը։ Երեխաների մեջ սերմանել հետաքրքրություն և համակրանք ազգային-եկեղեցական տոների, տոնակատարությունների հանդեպ, ծանոթացնել տոների իմաստներին, բովանդակությանը, Հայաստանում դրանք նշելու ավանդույթներին, ձևերին։ Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի պատմամշակութային օջախներ։ Ծանոթացնել մեր եկեղեցիներին, տալ

տեղեկություններ նրանց մասին։ Անհրաժեշտ է պատկերացումներ տալ ազգային մշակույթի, ժողովրդական արժեքների, տարբեր ծիսակատարությունների մասին։

3.2Գեղագիտական դաստիարակություն _

Աշակերտների մեջ ձևավորել սեր արվեստի նկատմամբ։ Կազմակերպել այցելություններ գեղագիտական կենտրոններ, պատկերասրահ։ Երեխային պետք է սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնել գեղեցիկը, տարբերակել այն, որին նպաստում են էքսկուրսիաները, զբոսանքները։ Փորձել աշակերտների օգնությամբ գեղեցիկ, ճաշակով կահավորել դասարանը՝ համապատասխանեցներով ժամանակի պահանջներին։ Սեր առաջացնել գեղեցիկի հանդեպ, կարողանա ընկալել գեղեցիկը , պահպանել և փոխանցել հաջորդ սերունդներին։

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել ազգային արժանապատվություն, սերմանել սեր դեպի հայրենիքը, դեպի մեր պատմությունը, հարգանքը պատմական անցյալի և նրանից ժառանգած ավանդույթների հանդեպ։ Անցկացնել զրույցներ հայ ժողովրդի տարած հաղթանակների մասին։ Սովորեցնել ազգային, հայրենասիրական երգեր։ Հարգանքով և հպարտությամբ լցնել աշակերտների սրտերը հայոց պետականության, բանակի, խորհրդանիշների, տոների, ազգային հերոսների հանդեպ։Բացատրել հայրենիքի, բանակի մեծ դերը ազգի պահպանության գործում։

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Այս դաստիարակության կարևորագույն խնդիրն է առողջության ամրապնդումը։ Աշակերտներին պետք է սովորեցնել՝շարժվեն «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսով։Պետք հետևել աշակերտի նստելաձևին՝ կեցվածքի ճիշտ ձևավորման համար։ Հաճախակի կատարել ֆիզկուլտդադարներ և ընդհանուր զարգացնող վարժություններ՝ նշելով դրանց ճիշտ կատարման կարևորության մասին։ Սրան նպաստում են նաև ֆիզկուլտուրայի դասերը, որին աշակերտները մասնակցում են մեծ սիրով։ Անցկացնել զրույցներ վնասակար սովորույթների մասին և դրանց հանդեպ կատարել բացասական վերաբերմունքի դաստիարակում։ Արժևորել սպորտի դերը մարդու կյանքում։ Ծանոթացնել սպորտի մեծ վարպետների կյանքին և գործունեությանը։ Աշակերտներին բացատրել, որ պետք է զգալի ժամանակ հատկացնեն մարզումներին, հաճախեն տարբեր սպորտային խմբակներ, վարեն առողջ ապրելակերպ։

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Պետք է սեր առաջացնել աշխատանքի հանդեպ։ Երեխային պետք է բացատրել, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել, պետք է զրուցել աշխատանքի կարևորության, ինչպես նաև աշխատանքի միջոցով ստեղծվող կյանքի համար անհրաժեշտ բարիքների մասին։ Սովորեցնել ճիշտ օգտագործել անհրաժեշտ նյութերը և աշխատանքային գործիքները տեխնոլոգիայի դասերին։ Սերմանել միմյանց օգնելու կարողություն և

աշխատասիրություն: Աշակերտներին մասնակից դարձնել զանազան աշխատանքներին, ընտելացնել աշխատանքային կարգ ու կանոնին: Պոկված դասագրքերի վերանորոգումը նույնպես նպաստում է աշխատանքային դաստիարակությանը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Երեխաների մեջ ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք: Պետք է խոսել բնության, շրջապատի մաքրության պահպանության անհրաժեշտության և կարևորության մասին: Ծանոթացնել բնապահպանական կանոններին, որին պետք է հետևի յուրաքանչյուր մարդ: Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները: Կարելի է կազմակերպել ծառատունկ, թղթի թափոնների հավաքում, պլաստմասե շշերի հավաքում,որոնց վերամշակումից ստանում են այլ առարկաներ: Աշակերտների համար ցուցադրել բնապահպանական, բնական ռեսուրսների օգտագործման տեսահոլովակներ:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Հաճախակի անցկացնել ծնողական ժողովներ, խոսել դպրոց-ընտանիք կապի անհրաժեշտության մասին. որ ծնողները միշտ պետք է լինեն ուսուցիչների,դպրոցի կողքին: Ծնողխորհրդի անդամների միջոցով հաճախակի անցկացնել այցելություններ երեխաների տները՝ ծանոթանալու նրանց սոցիալական պայմաններին: Անցկացնել զրույց ռիսկային խմբի երեխաների ծնողների հետ: Անհրաժեշտության դեպքում կատարել անհատական աշխատանք ծնողների հետ: Բացի ծնողական ժողովներից հանդիպել ծնողների հետ՝ աշակերտի մոտ նկատված անհաջողությանների, անկարգապահության շտկման նպատակով: Ապահովել ծնող-աշակերտ –ուսուցիչ կապը, որպեսզի համատեղ ուժերով դաստիարակեն հասարակության համար պիտանի մարդիկ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Դասարանի ակտիվի ընտրություն Դասարանում հերթապահության կազմում Դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության վիճակի ստուգում	1.09 4.09-8.09	դասվար, աշակերտներ
II	Դասարանի սոցիալապես անապահով երեխաների ցուցակի կազմում	11.09-15.09	դասվար, աշակերտներ
III	Ստեղծել «Կազմակերպական անկյուն» պատի թերթ Զրույց պատմական հայրենիքի մասին, տեսաֆիլմի դիտում	18.09-22.09	դասվար, աշակերտներ
IV	Զրույց անցկացնել այլ առարկաներ պարապող ուսուցիչների հետ	25.09-29.09	դասվար,

	Զրույց «Ագահության և արդարության մասին» թեմայով		աշակերտներ, ուսուցիչներ
V	Զրույց նվիրված ուսուցչի օրվան	2.10-6.10	դասվար, աշակերտներ
VI	Դասարանի սանիտարական վիճակի պահպանում	9.10-13.10	դասվար, աշակերտներ
VII	Աշնանային արձակուրդների անցկացման պլանի կազմում	16.10-20.10	դասվար
VIII	Դասալսումների անցկացում նույն դասարանում պարապող այլ առարկաներից	30.10-3.11	դասվար
IX	Զրույց «Հրաշք է ընկեր ունենալը, որովհետև…» թեմայով	6.11-10.11	դասվար, աշակերտներ
X	Օգնել երեխաներին արտադասարանական խմբակներում ընդգրկվելուն Զրույց «Ժամանակը ճիշտ օգտագործիր» թեմայով	13.11-17.11	դասվար
XI	Զրույց «Հեռու մնանք վնասակար սովորություններից»	20.11-24.11	դասվար, աշակերտներ
XII	Զրույց «Խնամքով օգտագործենք դասագրքերը» թեմայով	27.11-1.12	դասվար, աշակերտներ
XIII	Երկրաշարժից պաշտպանվելու կանոնները	4.12-8.12	դասվար, աշակերտներ
XIV	Ամանորյա նվերների պատրաստում	11.12-15.12	դասվար, աշակերտներ
XV	Դասասենյակի նախապատրաստումը Նոր տարվան	18.12-22.12	դասվար, աշակերտներ, ծնողներ
XVI	Անցկացնել զրույց զինվորների հետ	8.01-12.01	դասվար, աշակերտներ
XVII	Զրույց «Հայրենիքը սկսվում է իմ տնից» թեմայով	15.01-19.01	դասվար, աշակերտներ
XVIII	Դասագրքերի և գրենական պիտույքների վիճակի ստուգում	22.01-26.01	դասվար
XIX	Սիրով միմյանց գիրք նվիրենք	29.01-2.02	դասվար, աշակերտներ
XX	Հ.Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա նկարահանված ֆիլմերի, մուլտֆիլմերի դիտում	5.02-9.02	դասվար, աշակերտներ

XXI	Տեսադաս՝ Կոմիտասի կյանքն ու գործունեությունը, ունկնդրել Կոմիտասի երգերից	12.02-16.02	դասվար, աշակերտներ
XXII	Փոքրիկ միջոցառում՝ «Հայոց մայրերին»	19.02-23.02	դասվար, աշակերտներ
XXIII	Զրույց բնության, շրջապատի մաքրության պահպանության անհրաժեշտության և կարևորության մասին	26.02-1.03	դասվար, աշակերտներ
XXIV	Գարնանային արձակուրդների անցկացման պլանի կազմում	4.03-7.03	դասվար
XXV	Բնության փոփոխությունների դիտարկում «Գարունն արթնացել է »	11.03-15.03	դասվար, աշակերտներ
XXVI	Ճանապարհային երթևեկության կանոնները պետք է իմանան բոլորը	18.03-22.03	դասվար, աշակերտներ
XXVII	Զրույց «Ինչ հոգևոր տոներ գիտեք »թեմայով	1.04-5.04	դասվար, աշակերտներ
XXVIII	Զրույց «Ինչպես պետք է պահի աշակերտը իրեն փողոցում, տանը, դպրոցում, հասարակական վայրերում» թեմայով	8.04-12.04	դասվար, աշակերտներ
XXIX	Տեսադաս՝ «Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի» թեմայով	15.04-19.04	դասվար, աշակերտներ
XXX	Զրույց «Սպորտի դերը մեր կյանքում» թեմայով	22.04-26.04	դասվար, աշակերտներ
XXXI	Զրույց «Ես սիրում եմ իմ դպրոցը» թեմայով	29.04-3.05	դասվար, աշակերտներ
XXXII	Զրույց «Մայիսյան հաղթանակներ» թեմայով	6.05-10.05	դասվար, աշակերտներ
XXXIII	Դասագրքերի վերանորոգում	13.05-17.05	դասվար, աշակերտներ
XXXIV	Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում Զրույց «Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում» թեմայով	20.05-24.05	դասվար ուսուցիչներ